

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

**ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՆՈ  
ՄՈՎԱՍԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ**

## **ԵՐՎԱՆԴԱԿԵՐՏԻ ԳՈՎԵՐԳԸ՝ ՆԱԽԱՄԱՇՏՈՑՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՄՈՒՇ՝**

Նախամաշտոցյան Հայաստանի գրի և դպրության հարցը հատուկ ուշադրության առարկա է եղել դեռևս հայոց նոր այբուբենի ստեղծումից առաջ՝ Մեսրոպ Մաշտոցի որոնումների ժամանակ: Հայտնի է, որ երբ Մաշտոցը և կաթողիկոս Սահակ Պարթևը հայալեզու դպրություն ստեղծելու իրենց մտադրության մասին հայտնեցին Վռամշապուհ արքային, վերջինս նրանց հաղորդեց, որ տեղյակ է Միջագետքի հյուսիսում պահպանված հայոց հին գրերի մասին<sup>2</sup>: Դանիել անունով ասորի եպիսկոպոսից բերված գրանշանները, սակայն, չբավարարեցին խնդրի լուծմանը, և Մաշտոցը ձեռնամուխ եղավ նոր գրային համակարգի ստեղծմանը:

Նոր ժամանակների գիտության մեջ այն եղել է բուռն քննարկումների առարկա: Մատենագրական հաղորդումների և հնագիտական նյութերի ուսումնասիրությունը, ի վերջո, թույլ տվեց ոչ միայն վերականգնելու Հայաստանի նախամաշտոցյան դպրության պատմության ընդհանուր պատկերը, այլև դասակարգելու այն ըստ ծագման և պատկանելության, ըստ գրահամակարգի բնույթի, ըստ գրանշանների արտաքին տեսքի, ըստ արձանագրությունների բովանդակության և ըստ ժանրերի<sup>3</sup>:

---

<sup>1</sup> Այս հրապարակումը ծնունդ է առել Հայաստանի նախամաշտոցյան գրականության շուրջ երկու հեղինակների քննարկումների արդյունքում: Հոդվածի առաջին՝ գլխավորապես պատմագիտական վերլուծության հատվածի հեղինակն Արտակ Մովսիսյանն է, իսկ երկրորդ՝ բանասիրական հատվածինը՝ Վանո Եղիազարյանը:

<sup>2</sup> Այդ են միաբերան վկայում ինչպես հինգերորդ դարի, այնպես էլ հետագայի պատմիչները (Կորյուն, գլ. 2; Մովսես Խորենացի, գիրք Գ, գլ. ԾԲ; Ղազար Փարպեցի, դրվագ Ա, գլ. Ժ-ԺԱ և այլն):

<sup>3</sup> Հայաստանի նախամաշտոցյան դպրության մասին վերջին և առավել ամփոփ ուսումնասիրությունները տե՛ս Մովսիսյան Ա., Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Ե., 2003; Մովսիսյան Ա., Հայկական մեհենագրություն, Ե., 2003; Եղիազարյան Վ., Ակնարկներ հայոց նախամաշտոցյան գրականության, Ե., 2011; Եղիազարյան Վ., Հայ հին գրականության պատմություն, Ե., 2014, էջ 11-171:

Մասնավորապես, ըստ արձանագրությունների բովանդակության՝ Հայաստանից հայտնաբերված նախամաշտոցյան շրջանի արձանագրությունները բաժանվում են հետևյալ խմբերի՝

1. արքայական արձանագրություններ՝ նվիրված աստվածների պաշտամունքին,

2. ռազմական արշավանքների նկարագրություններ,

3. թագավորական նախնիներին ձոնված գրակիր կոթողներ,

4. թագավորական իշխանության և արքայի անձի աստվածացմանը վերաբերող արձանագրություններ,

5. արքայական հիշատակարաններ քաղաքների ու շինությունների (հատկապես՝ սրբավայրերի) հիմնադրման ու բարեկարգման մասին,

6. արձանագրություններ զանազան ծեսերի, արարողությունների (այդ թվում՝ մրցույթների) մասին,

7. նոր օրենքներ ու կարգեր սահմանող բնագրեր,

8. արքայական նվիրատվական արձանագրություններ,

9. թագավորական դրամների մակագրություններ,

10. արքայական նամակագրության արձանագրումներ,

11. հոգևոր-պաշտամունքային բազմաբնույթ բնագրեր,

12. ժամանակագրական-օրացուցային արձանագրություններ,

13. ընծայագրեր,

14. բարոյա-խրատական բովանդակությամբ չափածո ստեղծագործության հատվածներ,

15. պատմական բովանդակությամբ չափածո ստեղծագործության հատվածներ,

16. տապանագրեր (այդ թվում՝ չափածո եղերերգեր),

17. պատկանելություն ցույց տվող արձանագրություններ,

18. տարողության նշաններ,

19. մենանշաններ,

20. դեռևս անհայտ բովանդակությամբ գրակիր հուշարձաններ<sup>1</sup>:

Հասկանալիորեն այս ցանկը կարող է համալրվել նոր բնագրերի հայտնաբերմանն ու վերծանությանը զուգընթաց: Սակայն նման համալրում կարող է լինել նաև վաղուց հայտնի, բայց ուշադրությունից դուրս մնացած նյութերի ուսումնասիրության շնորհիվ, որոնցից մեկին նվիրված է մեր այս հրապարակումը:

Նախամաշտոցյան Հայաստանից հայտնաբերված արձանագրությունների բովանդակային ցանկում առաջին իսկ հայացքից աչքի է

<sup>1</sup> Մովսիսյան Ա., Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, էջ 227-231:

զարնում արքաների գործերի գովաբանության ու փառաբանության, նրանց նվիրված օրհներգերի ժանրի բացակայությունը, որը համաշխարհային գրավոր մշակույթում վկայված է ամենավաղ ժամանակներից:

Սկզբնական շրջանում գովաբանական և փառաբանության երգերը, ներբողներն ու օրհներգերը ձևավորվում էին աստվածներին: Սակայն ժամանակի ընթացքում, արքայական ընտանիքների աստվածային ծագման մասին պատկերացումների ամրապնդմանը զուգահեռ, դրանք սկսեցին ձոնվել նաև արքաներին: Արքաներին ձոնված գովերգերն ու հիմները մեծ քանակությամբ հանդիպում են Հին Աշխարհի գրականության մեջ: Իբրև ժանրի հնագույն և լավագույն նմուշներ կարելի է վկայակոչել Ք.ա. III հազարամյակի վերջին իշխած միջագետքյան Ուրի III հարստության արքաներին (Ուր-Նամմու, Շուլգի, Ամար-Սուեն, Շու-Սուեն, Իբբի-Սուեն) նվիրված գովաբանական և փառաբանության երգերը<sup>1</sup>: Դրանցում գովաբանվել են ոչ միայն արքաների անձնական արժանիքները, այլև կատարած գործերը, ստեղծած կառույցները: Ուշագրավ է, որ հենց նույն այս հարստության ժամանակաշրջանում տարիներն անվանակոչվել են արքաների կառուցած այս կամ այն շինության (տաճարի, պալատի, քաղաքային պարսպի և այլն) անվամբ: Այդ ավանդույթը շարունակվում է նաև հետագա դարերում:

Հայաստանը դուրս չի մնացել Հին Աշխարհի գրավոր մշակույթի զարգացման օրինաչափություններից, ուստի ակնկալելի է, որ նշված ժանրն իր լայն դրսևորումներով առկա լինել նաև նախամաշտոցյան գրականության մեջ: Հայոց նահապետների և արքաների արտաքինի գովաբանության, նրանց քաջության փառաբանման դրվագներ,

---

<sup>1</sup> Դրանց լավագույն քննական հրատարակությունները տե՛ս Castellino G., Urnammu. Three Religious Texts, “*Zeitschrift für Assyriologie*”, 52, 1957, p. 1-57; Flückiger-Hawker E., *Urnammu of Ur in Sumerian Literary Tradition*, Göttingen, 1999, p. 93-182; Kramer S.N., The Death of Ur-Nammu and his descent to the Netherworld, “*Journal of Cuneiform Studies*”, 21, 1967, p. 104-122; Falkenstein A., Sumerische religiöse Texte, 2, Ein Šulgi-Lied, “*Zeitschrift für Assyriologie*”, 50, 1952, p. 61-91; Klein J., *Three Šulgi Hymns. Sumerian Royal Hymns Glorifying King Šulgi of Ur*, Bar-Ilan University Press, 1981, p. 167-217; Pomponio F., Le sventure di Amar-Suena, “*Studi Epigrafici e Linguistici*”, 7, 1990, p. 3-14; Alster B., Sumerian Love Songs, “*Revue d'assyriologie et d'archéologie orientale*”, 79, 1985, p. 127-159; Sjöberg Å.W., Hymns to Meslamtaea, Lugalgirra and Nanna-Suen in Honour of King Ibbisuen (Ibbisîn) of Ur, “*Orientalia Suecana*”, 19-20, 1970-1971, p. 140-178 և այլն: Նշված բոլոր գովերգերը և հիմներն էլեկտրոնային տարբերակով տե՛ս The Electronic Text Corpus of Sumerian Literature, 2.4.1.1–2.4.5.5 (<http://etcs1.orinst.ox.ac.uk>):

անշուշտ, ունենք բազմաթիվ օրինակներով<sup>1</sup>: Սակայն տարօրինակ է, որ չկան նրանց հեղինակած մեծ կառույցների, առաջին հերթին՝ հիմնադրած քաղաքների մասին գովաբանության երգեր:

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ուշադիր քննությունը, սակայն, թույլ է տալիս պարզաբանելու նախաքրիստոնեական դարաշրջանում ստեղծված նման մի գովերգի գոյությունը: Պատմահայրը, ինչպես հայտնի է, հատուկ դրվատանքով է պատմում մեր երկրի արքաների շինարարական գործերի մասին: Դրանցից մեկի՝ Երվանդակերտի կառուցման մասին Մովսես Խորենացու հատվածն առանձնանում է բացառիկ բանաստեղծականությամբ. **«Քաղցր է ինձ ասել եւ յաղագս գեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի, զոր յօրինեաց նոյն ինքն Երուանդ գեղեցիկ եւ չքնաղ յօրինուածովք: Քանզի զմիջոց հովտին մեծի լնու մարդկութեամբ եւ պայծառ շինուածովք, լուսաւոր որպէս ական բիր: Իսկ շուրջ զմարդկութեամբն՝ ծաղկոցաց եւ հոտարանաց կազմութիւն, որպէս շուրջ զբբովն զայլ բոլորակութիւն ական: Իսկ զբազմութիւն այգեստանոյ՝ իբր զարտեանանց խիտ եւ գեղեցիկ ծիր. որոյ հիւսիսային կողմանն դիր կարակնածե՛ւ՝ արդարեւ գեղաւոր կուսից յօնից դարաւանդաց համեմատ: Իսկ ի հարաւոյ հարթութիւն դաշտաց՝ ծնօտից պարզութեան գեղեցկութիւն: Իսկ գետն բերանացեալ դարաւանդօք ափանցն՝ գերկթերթիսն նշանակէ շրթունս: Եւ այսպիսի գեղեցկութեան դիր՝ անքթթելի իմն գոգցես ի բարձրաւանդակ թագաւորանիստն զհայեցուածսն ունի. եւ արդարեւ բերրի եւ թագաւորական դաստակերտն»<sup>2</sup>:**

---

<sup>1</sup> Դրանց հրաշալի օրինակներից են Հայկի, Արամի, Արա Գեղեցիկի, Տիգրան Երվանդյանի, Արտաշեսի, Վաղարշակի և այլոց մասին Պատմահոր երկում պահպանված դրվագները:

<sup>2</sup> «Քաղցր է ինձ պատմել նաև գեղեցիկ Երվանդակերտ դաստակերտի մասին, որ նույն ինքը՝ Երվանդը սրբեծեց գեղեցիկ և չքնաղ հորինվածքով: Քանզի մեծ հովտի միջին մասը լցնում է բնակչությամբ և պայծառ շինություններով, լուսավոր՝ ինչպես աչքի բիրը: Իսկ բնակչության շուրջը կազմում է ծաղկոցներ և բուրաստարաններ, ինչպես բբի շուրջն աչքի մյուս բոլորակը: Իսկ այգիների բազմությունը՝ նման խիտ արտևանունքի գեղեցիկ գծին, որի հյուսիսային կողմի կամարածն դիրքն արդարև համեմատվում էր գեղեցիկ կոյսերի հոնքերին: Իսկ հարավային կողմի հարթ դաշտերը (հիշեցնում էին) ծնոտների գեղեցիկ ողորկությունը: Իսկ գետն իր երկու ափերի բարձրություններով պարկերացնում էր մի բերան՝ երկթերթ շուրթերով: Եվ այս գեղեցիկ դիրքը, կարծես, անթաղթ հայացքն ուղղել է թագավորանիստ բարձրավանդակի վրա: Արդարև բերրի և թագավորական դաստակերտ» (Մովսես Խորենացի, գիրք Բ, գլ. ԽԲ):

Մովսես Խորենացին հստակորեն նշում է, որ Երվանդի և Արտաշեսի պատմության համար իր աղբյուրները եղել են Անիի (Հանիի) Ողյումայ քուրմի աշխատանքներն ու վիպասանների երգերը. «Այս բանը մեզ հասարարապես պատմում է Հանիի Ողյումայ քուրմը, որը գրել է մեհենական պատմություններ և ուրիշ շար գործեր, որ մենք պատմելու ենք, որին վկայում են նաև Պարսից մատյանները և Հայոց վիպասանների երգերը»<sup>1</sup>:

Գրաբարի դասագրքերում և քրեստոմատիաներում հաճախ վկայաբերվող այս հատվածն իրավամբ ներկայացվում է իբրև բացառիկ նմուշ և, սովորաբար, վերագրվում է Մովսես Խորենացու գրական տաղանդին: Առանց վիճարկելու Պատմահոր բազմաշնորհ հանճարը՝ կցանկանայինք կանգ առնել մեկ հարցի վրա՝ արդյո՞ք Երվանդակերտի գովերգի հեղինակը Մովսես Խորենացին է, թե՞ նա այն քաղել է իր սկզբնաղբյուրներից:

Հարցի պատասխանը ստանալու համար պետք է նկատի ունենալ հետևյալ հանգամանքները.

ա) Երվանդակերտի նկարագրությանը նախորդող գլուխներում և ամբողջ աշխատության մեջ Պատմահայրը խոսում է բազմաթիվ քաղաքների (Վան-Շամիրամակերտի, Երվանդաշատի, Բագարանի, Արտաշատի, Վաղարշապատի և այլն) շինության մասին, սակայն բոլոր դեպքերում նրա խոսքը խիստ արձանագրային է: Մինչդեռ Երվանդակերտին վերաբերող հատվածն աչքի է ընկնում գեղարվեստական բացառիկ հորինվածքով և բանաստեղծականությամբ:

բ) Մովսես Խորենացու մոտ Երվանդը բացասական կերպար է, ուստի զարմանալի պետք է լիներ, որ նա բանաստեղծական գովերգով ներկայացներ հակակրած հերոսի կառուցած քաղաքը, բայց նման պատվի չարժանացներ իր փառաբանած հերոսների կառուցած քաղաքները (այդ թվում՝ Երվանդի հակառակորդ Արտաշեսի կառուցած Արտաշատ մայրաքաղաքը):

գ) Երվանդակերտի գովերգում շեշտվում է դաստակերտի «թագավորանիստ» լինելը: Երվանդակերտ ամբողջ կառուցվել էր մայրաքաղաք Երվանդաշատի հարևանությամբ և ծառայում էր նաև մայրաքաղաքի պաշտպանության գործին: Նկատենք, սակայն, որ Երվանդակերտի և Երվանդաշատի թագավորանիստ լինելը տևել է բավականին կարճ՝ Երվանդ Դ-ի (մ.թ.ա. մոտ 220-201 թթ.) թագավորության շրջանում, իսկ սելևկյան նվաճումից և ստրատեգիայի վերածվելուց (մ.թ.ա. 201-190 թթ.) հետո Հայաստանի անկախությունը վերականգնած Արտաշես Ա-ն նոր մայրաքաղաք Արտաշատի կառուցմանը ձեռնամուխ եղավ հենց

<sup>1</sup> Մովսես Խորենացի, գիրք Բ, գլ. ԽԸ:

մ.թ.ա. 180-ական թվականներին: Այսինքն՝ այս դեպքում ևս Մովսես Խորենացու՝ հեղինակ լինելը խիստ անհավանական է:

դ) Ինչպես հայտնի է, պարսից արքա Շապուհ Բ Երկարակյացը 360-ական թթ. վերջին մեծ ավերածության ենթարկեց Հայաստանի խոշոր քաղաքները՝ գերեվարելով բնակչության զգալի մասին, ինչի հետևանքով տեղի ունեցավ քաղաքային կյանքի անկում: Փավստոսի հաղորդման համաձայն՝ պարսիկները Երվանդաշատից գերի տարան հիսուն հազար տուն հայ և հրեա բնակչություն, իսկ «*քաղաքը հիմնահատակ կործանեցին*»: Դրան հաջորդեցին Հայաստանի բաժանումը 387թ. և Արշակունյաց թագավորության անկումը (428թ.), որոնք ավելի վատացրին Հայաստանի քաղաքների վիճակը: Մովսես Խորենացու ժամանակ Երվանդակերտն ու Երվանդաշատը ոչ միայն վաղուց թագավորանիստ չէին, այլև կորցրել էին իրենց հմայքն ու վերածվել աննշան բնակավայրերի<sup>2</sup>: Սա ևս ցույց է տալիս, որ Երվանդակերտի գովերգի հեղինակը չէր կարող լինել Արշակունյաց թագավորության անկումից հետո ստեղծագործող գործիչ, ինչպիսին էր Մովսես Խորենացին:

Ասվածը նկատի ունենալով՝ կարող ենք եզրակացնել, որ Պատմահայրը ոչ թե Երվանդակերտի գովերգի հեղինակն է, այլ գրառամաբ փոխանցողը, ում շնորհիվ էլ այսօր մենք ունենք բանաստեղծական այդ գոհարը:

Իսկ ո՞վ է գովերգի հեղինակը (կամ հեղինակները):

Երվանդի կերպարն իր հմայական բացառիկ գորությամբ (հիշենք հայացքով քարեր պայթեցնելու նրա ունակության հիշատակությունը) սիրելի է եղել իր ժամանակի քրմությանը, որն էլ ականատես է եղել այդ արքայի երկրաշեն գործունեությանը: Նկատենք, որ մեր պատմության մեջ Տիգրան Բ Մեծից հետո (որն իր անվամբ հիմնել է յոթ քաղաք) Երվանդ Դ-ն ամենաշատ քաղաքներ հիմնած արքան է. նա հիմնեց մայրաքաղաք Երվանդաշատը, երկրի նոր հոգևոր կենտրոն Բագարանը և Երվանդակերտ դաստակերտը: Ուստի տրամաբանական է եզրակացնել, որ Երվանդակերտի գովքը ստեղծվել է Երվանդ Դ-ի օրոք, նրա քրմության կողմից: Բնականաբար, այն պետք է տեղ գտներ Անիի մեհենական պատմությունների դիվանում, այդ թվում՝ Ողյունյա քրմի մատյանում: Այն կարող էր տեղ գտնել նաև հայոց վիպասանների երգերի շարքում, որին անդրադարձ կլինի ստորև:

<sup>1</sup> Փավստոս Բուզանդ, դպրություն Դ, գլ. ԾԵ:

<sup>2</sup> Տե՛ս Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 2, Ե., 1988, էջ 248-251 («Երվանդակերտ» և «Երվանդաշատ» հոդվածները):

Երվանդակերտին վերաբերող հատվածը Գողթան երգերի բանաստեղծական չքնաղ պատահիկ է, որը, սակայն չի գիտակցվել և վրիպել է հայագիտության ուշադրությունից: Բանաստեղծական այդ հատվածն ունի հետևյալ տողատված պատկերը.

***ԽԲ. Վասն ձեռակերտին, որ կոչի Երուանդակերտ***

*Քաղցր է ինձ ասել եւ յաղագս գեղեցիկ  
դաստակերտին Երուանդակերտի,  
զոր յօրինեաց նոյն ինքն Երուանդ  
գեղեցիկ եւ չքնաղ յօրինուածովք:  
Քանզի զմիջոց հովտին մեծի լնու մարդկութեամբ  
եւ պայծառ շինուածովք, լուսաւոր որպէս ական բիր:  
Իսկ շուրջ զմարդկութեամբն՝ ծաղկոցաց եւ  
հոտարանաց կազմութիւն,  
որպէս շուրջ զբքովն զայլ բոլորակութիւն ական:  
Իսկ զբազմութիւն այգեստանոյ՝  
իբր զարտեանանց խիտ եւ գեղեցիկ ծիր.  
որոյ հիւսիսային կողմանն դիր կարակնածե՛լ  
արդարեւ գեղաւոր կուսից յօնից դարաւանդաց համեմապ:  
Իսկ ի հարաւոյ հարթութիւն դաշտաց՝  
ծնօտից պարզութեան գեղեցկութիւն:  
Իսկ գեղն բերանացեալ դարաւանդօք ավանցն՝  
զերկթերթիսն նշանակէ շրթունս:  
Եւ այսպիսի գեղեցկութեան դիր՝ անքթթելի իմն գոգցես  
ի բարձրաւանդակ թագաւորանիստն զհայեցուածն ունի.  
Եւ արդարեւ բերրի եւ թագաւորական դաստակերտն:*

Հարկ է փաստել, որ Երվանդակերտին նվիրված այս հատվածն ունի գուսանական երգերին հատուկ սկիզբ՝ «Քաղցր է ինձ ասել...», որը նշված երգերին բնորոշ ոճավորում է:

Հայրենների՝ որպես գուսանաժողովրդական երգերի այդ ոճավորմանը այլ առիթով անդրադարձել ենք. «Հայրենի ժանրի բնորոշման համար կարևոր է նաև դրա կատարման եղանակը, արտահայտման կերպը:

*Կասեմ, թէ հայրէն ասա,  
Թէ չէ ես ասեմ՝ դուն լսէ.*

*Ջբերանդ ալ քենով ածէ*

*Ու զականջդ ալ ի գոց դու պահէ. Ա/ՁԲ, 141-144, Ա/ՁԳ, 576-592:*

Այս հայրենի «ես ասեմ՝ դուն լսէ» արտահայտությունը մեզ բառացիորեն հիշեցնում է ժողովրդական ստեղծագործություններին հատուկ դիմելաձևը, ասացող գուսանի խոսքը»<sup>1</sup>:

Ուստի, «քաղցր է ինձ ասել»-ը պետք է դիտարկել ոչ թե որպես Մովսես Խորենացու, այլ հենց ասացողի խոսք:

Բանաստեղծական այս հատվածում հանդիպում ենք դիմառնության գեղարվեստական հնարանքին, որը դարեր անց կիրառել է Ներսես Շնորհալին «Ողբ Եդեսիոյ» պատմաողբում, որտեղ քաղաքը հանդես է եկել որդեկորույս մոր կերպարով. այլ կերպ ասած՝ քաղաքը դեմք է առել: Այստեղ ևս Երվանդակերտը կանացի դեմք է առել, որը նույն գեղարվեստական հնարանքի հնագույն կիրառումն է:

Ակնհայտ է, որ այս հատվածը իսկապես բանաստեղծական մի բեկոր է, վիպասանական երգի մի հատված, որը, ցավոք, վրիպել է բանասերների ուշադրությունից:

Հարկ է նաև շեշտել, որ Բ գրքի ԽԲ գլխի միջակա մասը՝ «Երվանդի այս բոլոր շինածները Տրդատ Մեծը պարգևում է Կամսարականների ցեղի մարդկանց, իբրև իր մտերիմներին և Արշակունյաց ցեղի արյունակիցներին, այդ իր տեղում կպատմենք», Մովսես Խորենացու ընդմիջարկությունն է: Ուշադիր ընթերցողը նկատում է, որ երկու բանաստեղծական հատվածների արանքում Խորենացին գրել է իր դիտարկումը: Ավելին՝ Երվանդակերտ քաղաքի շինությանը նախորդող Երվանդաշատ և Բագարան քաղաքների կառուցման մասին գլուխների հետ համեմատությունը ցույց է տալիս, որ միայն Երվանդակերտի կառուցման մասին հատվածն է բանաստեղծական պատկերավորությամբ ներկայացվում:

Չի բացառվում նաև, որ վերջին պարբերությունը Երվանդի չար աչքի մասին, ևս լինի բանաստեղծական հատված:

*Բայց ասեն զերուանդայ՝*

*ըստ հմայից դժնեայ գոլ ական հայեցուածով.*

*վասն որոյ ընդ այգանալ աչարջացն*

*սովորութիւն ունել սպասատրացն արքունի՝*

*վէմս որձաքարեայս ունել ընդդէմ Երուանդայ,*

<sup>1</sup> Երիագարյան Վ., Հայրեններ, Վանածոր, 2007, էջ 27-28:



*եւ ի հայեցուածոցն դժնութենէ,  
ասեն, պայթել ործաքար վիմացն:*

Ավելորդ չէ նկատելը, որ այս հատվածը ևս սկսվում է «Բայց ասեն» սկզբնաձևով, ապա նաև շարունակության մեջ բերվում է «ասեն, պայթել ործաքար վիմացն», որը Գողթան երգերում հաճախ հանդիպող ձև է՝

*Տենչայ, ասեն, Սաթինիկ փիկին...<sup>1</sup>  
Ճաշ, ասեն, գործեալ Արգաւանայ...<sup>2</sup>  
Արքաւագղայ ոչ գտեալ, ասեն, ...<sup>3</sup>  
Նա անց, ասէ, գնաց և շինեաց...<sup>4</sup>*

Ահա և այն օրինակները, որոնք առկա են Գողթան երգերում և ուղղակի վկայում են, որ **ասեն** ձևը առկա է գուսանական երգերում՝ համաձայն Խորենացու ոճավորման: Հարկ է փաստել, որ Խորենացին, վկայակոչելով Մար Աբասին, հաճախ գրում է՝ **ասէ**<sup>5</sup>, իսկ վիպասանքի պարագայում՝ **ասեն**, **ինչպես** արդեն նշել ենք:

Սա էլ գալիս է հաստատելու, որ և՛ Երվանդակերտի հատվածը, և՛ Երվանդի չար աչքի հատվածը բանաստեղծական երգեր են, որոնք լրացնում են մեր վիպասանական Գողթան երգերի շարքը:

Ի վերջո, Խորենացին չար աչքի հավատալիքի ջատագով չէ. նա քրիստոնյա մարդ է, և հեթանոսական այդ սովորույթներն անհարիր են նրա քրիստոնեական աշխարհայացքին, ինչի մասին անմիջապես շարունակության մեջ խոսում է Խորենացին. «Բայց այս կամ եղիցի սուտ եւ առասպել, եւ կամ դիւականս ինչ առ իւր ունել զօրութիւնս, զի այսպէս հայեցուածոցն անուամբ վնասեցէ զորս կամի» (Սակայն այս բանը կամ սուտ է և առասպել, կամ թե ինչ-որ դիվական զորություն է ունեցել, որպեսզի այսպիսի հայացքի զորությամբ վնասի նրան, ում որ կամենա):

---

<sup>1</sup> Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, գիրք Ա, գլ. Լ:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Տե՛ս օրինակ՝ «Եւ ինքն խաղայ, ասէ, այլով աղխին ընդ արեւմուտս հիւսիսոյ. գայ բնակէ ի բարձրաւանդակ դաշտի միում, եւ անուանէ զանուն լեռնադաշտին Հարք, այս ինքն թէ հարք են աստէն բնակեալք՝ ազգի տանն Թորգոմայ» (Գիրք Ա, գլ. Ժ), «Բայց զդիակն Բելայ պաճուճեալ դեղովք, ասէ, հրամայէ Հայկ տանել ի Հարք, եւ թաղել ի բարձրաւանդակ տեղուջ, ի տեսիլ կանանց եւ որդուց իւրոց» (Գիրք Ա, գլ. ԺԱ) և այլն:

Արդ՝ Երվանդի չար աչքի մասին հատվածը ևս ակնհայտորեն Գողթան երգերի մի պատառիկ է:

Չար աչքի հավատալիքի և երվորյակների առասպելի բանագիտական քննություն արվել է<sup>1</sup>, որն էլ մի կողմնակի կերպով գալիս է հաստատելու, որ խնդրո առարկա հատվածներն իսկապես վիպասանական երգեր են: Դա հաստատվում է նաև Խորենացու պատմության Բ գրքի ԽԸ գլխի այն վկայությամբ, թե Ողյումպ քուրմը գրել է մեհենական պատմություններ և ուրիշ շատ գործեր, որին վկայում են նաև պարսից մատյանները և **հայոց վիպասանների երգերը**: Իսկ Ողյումպը Դարանաղյաց Անիի Արամազդ աստծո տաճարի քուրմ է, որն ապրել է մոտ 1-2-րդ դարերում, և նրա մատյանն ամփոփել է Երվանդ Դ Վերջինի և նրան հաջորդած Արտաշես Ա-ի պատմությունը<sup>2</sup>:

\* \* \*

Ամփոփելով ողջ ասվածը՝ կարող ենք եզրակացնել.

1) Մովսես Խորենացու «Հայոց պատմության» երկրորդ գրքի ԽԲ գլխում պահպանված Երվանդակերտի գովերգը ստեղծվել է նախամաշտոցյան շրջանում, ամենայն հավանականությամբ՝ հենց Երվանդ Դ-ի կառավարման օրոք՝ Ք.ա. III դարի վերջին:

2) Երվանդակերտի գովերգը գովաբանական ժանրի ստեղծագործություն է, որը, հավանաբար, ստեղծվել է Երվանդ Դ-ի քրմության կողմից և տեղ գտել Անիի մեհենական պատմությունների դիվանում: Այն տեղ է գտել Ողյումպ քրմի մատյանում, որից էլ քաղել է Մովսես Խորենացին (ինչպես վկայում է հենց ինքը):

3) Երվանդակերտի նկարագրությունն իր պատկերավորությամբ, իսկ Երվանդի չար աչքի մասին հատվածն իր ժողովրդաշունչ էության սկսվում են վիպասանական երգարվեստին բնորոշ «ասեն» դիմելաձևով, որն էլ ապացույց է այն բանի, որ Խորենացու պատմության Բ գրքի ԽԲ գլուխը, բացի միջակա հատվածից և վերջին նախադասությունից, վիպասանական երգի վկայություն է:

---

<sup>1</sup> Տե՛ս Սարգիս Հարությունյան, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 338-348, Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Ե., 2006, էջ 81-98, նաև Լուսինե Ղոնջյան, Երկվորյակների առասպելը և դրա տարբեր դրսևորումները հայ վիպական ավանդության համակարգում, Ե., 2012, էջ 46-59:

<sup>2</sup> Տե՛ս Սարգսյան Գ. Խ., Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Ե., 1966, էջ 139-241, նաև Երիագարյան Վ., Հայ հին գրականության պատմություն, Ե., 2014, էջ 62-64:

4) Խորենացու Պատմության մեջ հիշատակվող վիպասանական երգերը Արտաշեսի մասին, ինչպես նաև Երվանդի և Երվազի առասպելը՝ որպես երկվորյակների առասպելույթ, վկայվել են ինչպես Ողյումայքումի մատյանում, այնպես էլ հայ վիպասանական երգերում:

5) Երվանդակերտի նկարագրությունը («Քաղցր է ինձ ասել եւ յաղագս գեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի») և Երվանդի չար աչքի մասին («Քայց ասեն զԵրուանդայ...») հատվածները լրացնում են Գողթան երգերի հատակտորների շարքը:

**Քանալի բաներ.** *նախամաշտոցյան գրականություն, Մովսես Խորենացի, Գողթան երգեր, Երվանդակերտ, Երվանդի չար աչքի մասին հավափարալիք, գովք, վիպասանական երգեր:*

***Егуазарян Вано, Мовсисян Артак***

**Панегирик Ервандакерту – образец домаштоцевской литературы**

### **Резюме**

Панегирик Ервандакерту, сохранившийся в 42-ой главе Второй Книги «Истории Армении» Мовсеса Хоренаци, был создан в домаштоцевскую эпоху. Панегирик Ервандакерту – произведение гимнографического жанра и вместе с фрагментом о колдовском глазе Ерванда дополняет цикл Гохтанских песен.

***Yeghiazaryan Vano, Movsisyan Artak***

**The Ode of Ervandakert – a Sample of Premashtots Literature**

### **Summary**

The Ode of Ervandakert preserved in the 42-rd chapter of the second book of "Armenian history" by Movses Khorenatsi was created in the premashtots period. The Ode of Ervandakert is a creation of the commendation genre and replenishes the Goghtan songs series with the fragment on Ervand's evil eye.